

**ՀՆԴԵՎՐՈՊԱԿԱՆ ԼԵԶՈՒՆԵՐՈՒՄ ԶԱՅՆԱԿՈՐՆԵՐԻ
ՀԵՐԹԱԳԱՅՈՒԹՅԱՆ ՀԻՆ և ՆՈՐ ՀԵՐՏԵՐԻ ԶՆՆՈՒԹՅԱՆ ՓՈՐՁ**

Ա. Ո. ԱՎԵՏՅԱՆ

Ինչպես հայտնի է, ամեն մի լեզվի պատմական զարգացման որևէ կոնկրետ փուլում միշտ առկա են լինում այնպիսի երևույթներ, որոնք շեղվում են տվյալ համաժամանակյա կտրվածքում գործող ընդհանուր օրինաչափություններից և ըստ այդմ՝ նկարագրական քերականություններում բնորոշվում են իբրև «անկանոնություններ կամ բացառություններ»: Պատմահամեմատական հետազոտության արդյունքում պարզվում է, որ շատ դեպքերում համաժամանակյա անկանոնությունների մեջ մնացորդների տեսքով պահպանված են լինում հնագույն շրջանների օրինաչափությունները: Պատահում է նաև այնպես, որ տարբեր պատճառները հանգեցնում են միևնույն կամ մասն արդյունքի: Ուստի ծագումնաբանական տարբեր շերտերի սահմանազատումը առանձնահատուկ կարևորություն է ստանում: Այս հոդվածում փորձ է արվում ծագումնաբանական քննության ենթարկել ու միմյանցից սահմանազատել *ի*-ն. լեզուներում ձայնավորների հերթագայության (ձայնդարձի) մի շարք տիպական դեպքեր: Ձայնավորների հերթագայությունը (ձայնդարձը) իբրև քերականական իմաստներ արտահայտող լեզվամիջոց՝ հանդիպում է տարբեր լեզուներում:

Այսպես, արաբ. *կեբ* հնչյունախմբի (որն ունի ընդհանուր «գրել» իմաստ) տարբեր ձայնավորումների հետևանքով ունենք *karaba* «գրեց», *yakubus* «գրում է», *kuciba* «գրվեց», *katic* «գրող», *kitab* «գիրք» և այլն: Հնդեվրոպական հիմք-լեզվում ևս ձայնդարձը գործել է: Հնդեվրոպական ձևույթները (արմատներ, հիմքակազմ ածանցներ, վերջավորություններ) կարող էին հանդես գալ ձայնավորման երեք հիմնական տեսակներով. **e* (*ē*) **o* (*ō*) - (գրո):

Սրանք պայմանականորեն կոչվում են հերթագայության (ձայնդարձի) վերին, միջին և ստորին աստիճաններ: Հնդեվրոպական ձայնորդները (*y*, *w*, *r*, *l*, *m*, *n*) միանալով ձայնավորների հետ, կազմում էին երկբարբառներ, որոնց հերթագայության հիմքում ընկած էր ձայնավորների հերթագայության հիշված տիպը.

<i>ei</i>	<i>oi</i>	<i>i</i>
<i>eu</i>	<i>ou</i>	<i>u</i>
<i>er</i>	<i>or</i>	<i>r</i>
<i>el</i>	<i>ol</i>	<i>l</i>
<i>em</i>	<i>om</i>	<i>m</i>
<i>en</i>	<i>on</i>	<i>n</i>

Այսպիսով երկբարբառների հերթագայության դեպքում ձայնորդը ստորին (գրո) աստիճանում հանդես է գալիս որպես ձայնավոր: Բացի հերթագայության նշված հիմնական տիպից առկա էին հերթագայության երկու այլ տիպեր ևս, որոնք համեմատաբար քիչ դեպքեր էին ընդգրկում¹.

¹ Տե՛ս Գ. Ջահուկյան, Հին հայերենի հոլովման սխտեմը և նրա ծագումը, Եր., 1959, էջ 161, Հ. Աճառյան, Լիակատար քերականություն հայոց լեզվի, հ. III, Եր., 1957, էջ 27-28, հ. ն. ձայնդարձի տարբեր տիպերի առավել ամբողջական նկարագրությունը տրված է՝ K. Brugmann, Grundriss der vergleichenden Grammatik der indo-germanischen Sprachen. Bd. I,

1) ē	ō	ə
2) ā	-	ə

Հնդեվրոպական հերթագայությունների համակարգի քայքայումը հասցնում է այն բանին, որ արմատի տարբեր ձայնավորում ունեցող տարատեսակների միջև եղած կապը դադարում է գիտակցվելուց, և դրանք իմաստի հետագա տարբերակմամբ վերածվում են անկախ բառերի: Հայերենը պահպանել է զգալի թվով արմատական այդպիսի տարբերակներ, որոնք, անհավանականորեն հանդերձ կամ առանց դրանց, միայն ձայնավորման տարբերությամբ, հանդես են գալիս որպես անկախ արմատներ: Այս դեպքում պետք է նկատի առնել, որ հ.-ե. *ē -ն ու *ō-ն ընդհանրապես և *e-ն ու *o-ն ունգայիններից առաջ դրսևորվում են հին հայերենում որպես ի և ու, *eu երկբարբառը տալիս է ոյ, *_h *_h*m_o, *_h ձայնավոր ձայնորդները՝ ար, աղ (ալ), ամ, ան.

ոտն-հետք) < *pod-/ped-
լոյս-լուսն < *leuk-/lukon
գելում-գալարեմ < *vel-/vl-
հեղում -ողողեմ-հալեմ < *pel-/pol-/pl-
բրբռ. գեղել-գող-գաղեմ < *vel-/vol-/vl-
չոր-չիր < *ksoro-/ksēro- և այլն²:

Հ.-ե. լեզուների համեմատական ուսումնասիրությունից պարզվում է, որ ձայնդարձը կարևոր դեր է խաղացել նախալեզվի ձևաբանության մեջ՝ արտահայտելով զանազան քերականական իմաստներ: Պարզվում է, ասենք, որ հ.-ե. հոլովման համակարգում սկզբունքորեն լիաձայն աստիճանը առկա է եղել եզ. ուղղ., կոչ., հայց., ներգ. և հոգ. ուղղ., կոչ., հայց. հոլովներում, որը մյուս հոլովներում հերթագայվում էր ձայնդարձի գրո աստիճանի հետ: Օրինակ՝ հ.-ե. *dōnt-s «ատամ» բառից եզ. հայց. *dōnt-m, բայց եզ. սեռ. *dōt-ós, հոգ. ուղղ. dōnt-és, բայց հոգ. ներգ. *dōt-sú, հոգ. գործ. *dōd-bhís և այլն: Բայց ձայնդարձը հ.-ե. նախալեզվում հոլովական իմաստները տարբերակելու հարցում օժանդակ դեր է խաղում: Այդ պատճառով էլ հետագայում այն ըմբռնվում է իբրև ավելորդ ու ոչ էական ձևաբանական միջոց և աստիճանաբար ջնջվում է ցեղակից լեզուների հոլովման հարացույցից՝ թողնելով միայն առանձին մնացորդներ: Այսպիսով, հոլովական իմաստները բնորոշելու հարցում վերջավորությունների դերը միանշանակ է դառնում: Ընդհանուր առմամբ հ.-ե. ձայնդարձի նախնական վիճակը այս դեպքում համեմատաբար լավ (բայց ոչ լիովին) պահպանվել է սանսկրիտում, իսկ մյուս լեզուները սովորաբար ընդհանրացրել են հերթագայության այս կամ այն աստիճանը: Այսպես, վերոհիշյալ *dōnt-s-ի դեպքում տեսնում ենք, որ միևնույն հունարենը ընդհանրացրել է [o] աստիճանը՝ 'οδων «ատամ», եզ. սեռ. 'οδοντος և այլն, լատիներենը՝ հավանաբար զրո աստիճանը dēns «ատամ», եզ. սեռ. dentis և այլն (հ.-ե. և՛ en-ը և՛ n-ը տալիս են լատ. en), գոթերենը՝ զրո աստիճանը՝ tuntuþs «ատամ», լիտվերենը [o] աստիճանը՝ dantis «ատամ» և այլն, սանսկրիտը դեռևս պահպանում է հարացույցի ներսում լիաձայն և զրո աստիճանների հակադրությունը՝ dan «ատամ»- եզ. ուղղ. <հ.-ե. *dōnt; dātas-եզ. սեռ. <հ.-ե. *dōntós, dātsú հոգ. ներգ. <հ.-ե. *dōntú, dāntas հոգ. ուղղ. <հ.-ե. *dōntes և այլն:

Strassburg, 1897. էջ 482-502, A. Meillet, Introduction à l'étude comparative des langues indo-européennes, Paris, 1908, էջ 126-138, O. Szemerényi, Einführung in die vergleichende Sprachwissenschaft, Darmstadt, 1970, էջ 76-87:

² Տե՛ս Գ. Զահուկյան, նշվ. աշխ., էջ 162, Հր. Աճառյան, Հայերեն արմատական բառաբան, հ. I-IV, Եր., 1971-1979՝ համապատասխան վերոհիշյալ հայերեն գլխաբառերի տակ:

Այս դեպքում սանսկրիտի հարացույցի նախնականությունը պարզվում է այն բանի շնորհիվ, որ այս կամ այն չափով հ.-ե. ձայնդարձի մնացորդներ են պահպանվել հ.-ե. տարբեր լեզուներում: Ասենք, հուն. 'արղՎ «խոյ» բառի եզ. սեռ. 'αργος, լատ. pater «հայր» բառի եզ. սեռ. patris, հ.-ե. * anǵhen > հայ. անձն, հ.-ե. * anǵhenes > հայ. անձինք, հ.-ե. * anǵhǵbhis > հայ. անձամբք և այլն: Հ.-ե. ձայնդարձի համակարգի հետագա քայքայմանը, անշուշտ, նպաստել են նաև ցեղակից լեզուներում հ.-ե. նախնական հնչյունների կրած պատմական փոփոխությունները: Այս առումով չափազանց տիպական է հայ. հայր բառի հոլովման պատկերը գրաբարում. եզ. ուղղ. հայր < հ.-ե. * pǣtēr, սեռ. հար < * pǣtrós, հոգ. գործ. հարբք < * pǣtrbhis և այլն, որտեղ դրսևորված են հ.-ե. ē և գրո աստիճանները: Այդուհանդերձ, հ.-ե. լեզուների հնչյունական օրինաչափ համապատասխանությունների համակարգի շնորհիվ ցեղակից լեզուներում բացահայտվում են նախալեզվյան ձայնդարձի նույնիսկ արտաքինից անճանաչելի դարձած բոլոր դրսևորումները: Սակայն հ.-ե. լեզուներում հանդիպող ոչ բոլոր հերթագայություններն են, որ ժառանգված են նախալեզվից: Ջանազան հնչյունափոխությունների, համաբանության, առնմանության և այլնի հետևանքով հ.-ե. առանձին լեզուների պատմական զարգացման ընթացքում առաջացել են ձայնավորների նոր հերթագայություններ, որոնք հաճախ արտաքուստ չեն տարբերվում նախորդներից: Ուստի, անհրաժեշտություն է առաջանում.

1) Մի կողմից՝ բացահայտել ու խնամքով համակարգել ցեղակից լեզուներում պահպանված՝ հ.-ե. ձայնդարձի բոլոր դրսևորումներն ու վերապրուկային մնացորդները, վերջիններիս հիման վրա վերականգնել, որքան որ այդ հնարավոր է, նախալեզվյան ձայնդարձի սկզբնական դրությունը և ապա հետազոտել նրա հետագա ճակատագիրը հ.-ե. առանձին լեզուներում:

2) Մյուս կողմից՝ լեզվական փաստերի համակողմանի քննության շնորհիվ հ.-ե. ձայնդարձի զանազան դրսևորումներից հստակ կերպով սահմանագատել ձայնավորների հերթագայության այն բոլոր դեպքերը, որոնք առաջացել են առանձին լեզուների պատմական զարգացման ընթացքում ինքնուրույն ճանապարհով, բայց առանձին դեպքերում արտաքուստ կարող են նախալեզվյան ձայնդարձի պատրանք ստեղծել, իսկ անզուշտության դեպքում՝ թյուրիմացությունների տեղիք տալ:

Կոնկրետ գերմանական լեզուների ձայնավորների հերթագայության հին և նոր շերտերի սահմանագատման կարևորությունը նկատել էր դեռևս Յակոբ Գրիմը: Նա տարբերակում և բացատրում է գերմանական հնչյունական համակարգի երկու կարևոր օրինաչափությունը՝ Ablaut-ը և Umlaut-ը: Արտաքնապես միևնույն բնույթն ունեցող այս երկու երևույթը (երկուսն էլ ներկայացնում են ձայնավորների հերթագայություն) Գրիմը տարբերակում է ըստ ծագման բնույթի. նա նկատում է, որ Ablaut-ը ավելի հին ետ՝ ույթ է և պայմանավորված է լեզվի ներքին կառուցվածքով, մինչդեռ Umlaut-ը՝ նոր երևույթ է և առաջացել է ձայնավորների առնմանման (ասիմիլյացիայի) արդյունքում՝: Սակայն, պետք է նշել, որ, թեև հ.-ե. լեզուների համեմատական ուսումնասիրությանը նվիրված գրեթե բոլոր աշխատություններում անհրաժեշտաբար խոսվում է հ.-ե. ձայնդարձի մասին և այս կամ այն չափով նշվում նրա՝ նախալեզվում ունեցած քերականական արժեքը, այդուհանդերձ, չկան ինչպես բուն հ.-ե. ձայնդարձին և ցեղակից լեզուներում նրա դրսևորումներին, այնպես էլ հ.-ե. առանձին լեզուներում ինքնուրույն ճանապարհով առաջացած ձայնավորների հերթագայություններին նվիրված նկարագրական բնույթի հատուկ ուսումնասիրություններ: Ինչպես արդեն վերը նշվեց, սույն հոդվածում փորձ է արվում միմյանցից սահմանագատել հ.-ե. լեզուներում ձայնավորների հերթագայության հին և նոր

՝ Տե՛ս Գ. Զահուկյան, Լեզվաբանության պատմություն, Բ. I, Եր., 1960, էջ 323:

շերտերին պատկանող մի շարք տրիպական դեպքեր: Այսպես, հ.-ե. *dhē «դնել» արմատի լիաձայն աստիճանից են ծագում հուն. τι-θη-μι «դնում եմ», ε-θη-κ-α «դրեցի», սանսկ. անուհիմաստ da-dhā-mi, լատ. fē-c-i «արեցի», իսկ նույն արմատի *dhə ստորին աստիճանից՝ հուն. τι-θε-μεν «դնում ենք», ε-θε-μεν «դրեցինք», լատ. fa-c-io «անում եմ»: Բայց լատ. fac- ձևային անխախտի համապատասխան պայմաններում a-ի թուլացման արդյունքում առաջացել են fic- և fec- տարբերակներ՝ conficio «անում եմ, վերջացնում եմ» և confectus «կատարված, ավարտված»: Վերջին հանգամանքն էլ հ.-ե. ծագում ունեցող ē/a հերթագայության կողքին ծնունդ է տվել բուն լատինական ծագում ունեցող a/i/e- հերթագայությանը: Բայց եթե այս դեպքում հեշտորեն ճանաչվում է վերջինիս ոչհնդեվրոպական բնույթը, որովհետև այն չի համապատասխանում նախալեզվյան ձայնդարձի շարքերից ոչ մեկին, ապա առանձին դեպքերում կարող է այդ կարգի ձևական համապատասխանությունն առկա լինել, ինչն էլ բարդացնում է հետազոտողի գործը: Ասենք, լատ. ager «դաշտ», եզ. սեռ. agri կամ sacer «մվիրված», եզ. սեռ. sacri ձևերում թվում է, թե առկա է հ.-ե. նույն e/զրո հերթագայությունը, ինչ լատ. pater «հայր», եզ. սեռ. patris-ի դեպքում: Մինչդեռ փաստերը ցույց են տալիս, որ առաջին դեպքում e/զրո հերթագայությունը բուն լատինական ծագում ունի և որ ager և sacer ձևերը համապատասխանաբար առաջացել են *agros > *agrs > *ager > ager և *sacros > *sacrs > *sacerr > sacer հնչյունափոխության հետևանքով⁴:

Ինչ վերաբերում է լատ. pater/patris ձևերում գործող e/զրո հերթագայությանը, ապա վերջինս առաջացել է հ.-ե. *ē /զրո pǣtēr/pǣtrēs հերթագայությունից այն բանի շնորհիվ, որ լատիններենում բառավերջի փակ վանկում սկզբնական երկար ձայնավորները կարճացել են⁵ (հմմտ. լատ. or̄nā-re «զարդարել», բայց or̄nāt «զարդարում է»): Նմանապես հ.-ե. ձայնադարձի հետ ծագումնաբանորեն կապված չեն ոռու. com «քուն», եզ. սեռ. сна և дeнь «օր», եզ. սեռ. дня ձևերում հանդես եկող o/զրո և e/զրո հերթագայությունները: Բանն այն է, որ վերոհիշյալ ոռու. բառերի եզ. ուղղ. և սեռ. ձևերը հին սլավոներենում ունեին հետևյալ տեսքը.

եզ. ուղղ. sŭnŭ,
եզ. ուղղ. dŭnŭ,

սեռ. sŭnā
սեռ. dŭnjā

Այդ ŭ և ĭ ձայնավորները եղել են գերկարճ հնչյուններ: Հետագայում վերջիններս սլավոնական լեզուներում անշեշտ (թույլ) դիրքում ավելի թուլանալով անհետանում են, իսկ շեշտակիր (ուժեղ) դիրքում համընկնում են լիաձայն o և e ձայնավորների հետ: Տվյալ դեպքում հ. սլ. ŭ > ոռու. o, հ. սլ. ĭ > ոռու. e⁶:

Երբեմն էլ տվյալ լեզվի ներսում ձայնավորների նոր հերթագայություն է ծագել ոչ թե շեշտի ազդեցությամբ տեղի ունեցած հնչյունափոխության հետևանքով, այլ համաբանության ճանապարհով: Այդ է վկայում, կարծում ենք, ոռու. бeрy/со-бoр/бpать/со-бipать ձևերում գործող e/o/զրո/и հերթագայության ծագումնաբանական քննությունը: Ռուս. վերոհիշյալ ձևերին հին սլավոներենում համապատասխանում են bero/sŭ-borŭ/bŭrati/sŭ-birati-ն: Վերջիններիցս бер-ը ներկայացնում է հ.-ե. *bher- «բերել» արմատի *bher -վերին, sŭ-borŭ-ն՝ *bhor-միջին և bŭrati-ն՝ *bhr-ստորին՝ աստիճանները, իսկ sŭ-birati-ի i-աստիճանը, մեր կարծիքով, ծագել է սլավոնական հողի վրա հետևյալ ճանապարհով. հին սլավոներենում համապատասխան կարճ և երկար ձայնավորների հերթագայությունը՝ e/ĕ, o/a, ĭ/i, ŭ/y, ձևաբանական նշանակություն է ձեռք բերել. կարճ ձայնավորով


⁴ St' u K. Brugmann, նշվ. աշխ., էջ 219, И. М. Тронский, Историческая грамматика латинского языка, 1960, էջ 92-93:

⁵ St' u И. М. Тронский, նշվ. աշխ., էջ 97-98:

⁶ St' u А. Мейе, Общеславянский язык, М., 1951, էջ 87-90, В. Ф. Кривчик, Н. С. Можейко, Старославянский язык, Минск, 1974, էջ 44-47:

բայական հիմքերը ցույց են տալիս միակատար, չկրկնվող գործողություն, իսկ երկար ձայնավորով բայական հիմքերը՝ կրկնվող, տևական գործողություն, ինչպես՝ *vü-ložici/vü-lagati* «ներսը դնել», *sü-züvati/sü-zyvati* «կանչել» և այլն⁷ (հմմտ. ժամ. ռուս. *вложить/влагать* «ներսը դնել», *созвать/созывать* «կանչել» կատարյալ և անկատար կերպերի հակադրությունը):

Մենք կարծում ենք՝ ահա այդ քերականական սկզբունքի հիման վրա էլ հենց հ.-ե. **bhr-*ստորին աստիճանից ծագող հ.սլ. *bīrati* ձևի համար համաբանությամբ ստեղծվել է համապատասխան երկար *i* ձայնավորով տարբերակ, որը նախորդի հակադրությամբ ցույց է տալիս անկատար, տևական կերպի գործողություն: Հետևաբար հ. սլ. *sü-bīrati/bīrati*, ժամ. ռուս. *со-бидрать/бидрать* ձևերում գործող *i/i* և *и/арн* հերթագայությունները նույնպես բուն սլավոնական ծագում ունեն, և մենք դրանք ևս սահմանազատում ենք հ.-ե. ձայնադարձի արտահայտություններից: Այդպես էլ նախահայերենում նոր հերթագայություններ են առաջացել մի կողմից՝ բառի վերջնավանկի ձայնավորի թուլացման, մյուս կողմից՝ շեշտանախորդ վանկի որոշ երկբարբառների ու ձայնավորների թուլացման հետևանքով: Ինչպես նշում է Գ. Զահուկյանը, շեշտափոխական հնչյունափոխության համակարգի ծագման հարցը անհրաժեշտ ուշադրության չի արժանացել լեզվաբանական-հայագիտական գրականության մեջ, հետազոտողները բավարարվել են շեշտի ազդեցության ընդհանուր մատնանշմամբ⁸: Արդ, խմբավորվելով հնչյունափոխությունների այդ տիպերը և հաշվի առնելով փոփոխությունների ուղղությունը՝ Գ. Զահուկյանը փորձում է որոշակի կապ տեսնել հ.-ե. ձայնավորների հերթագայությունների և հայերենի շեշտափոխական հնչյունափոխությունների միջև: Նա շեշտափոխության հետևանքով տեղի ունեցող՝ ձայնավորների և երկբարբառների թուլացման երևույթը փորձում է քննել ձայնավորների եռանկյան հիման վրա և ցույց է տալիս, որ նրանցից յուրաքանչյուրը հնչյունափոխվելիս մի աստիճան բարձրանում է ձայնավորների եռանկյան մեջ՝ ձեռք բերելով ավելի նեղ արտասանություն: Այս դեպքում *ei*, *oi* (գրությամբ *ē*, *oy*) և *ia* (գրությամբ *ea*) երկբարբառները մենաբարբառանում են և համապատասխանաբար նեղանում՝ *ea>e*, *ē(ey)>i*, *oy>u*, իսկ ամենավերին բարձրացման *i* և *u* ձայնավորները վերածվում են թույլ *ə* ձայնավորի կամ դուրս են ընկնում⁹:



Այնուհետև, Գ. Զահուկյանը նշում է, որ հնչյունափոխության դեպքերից երկուսը՝ *ե/ի-ն* և *ոյ/ու-ն*, իրենց հիմքերն ունեն հնդեվրոպական *ei/oi/i* և *eu/ou/u* հերթագայությունների մեջ (որքանով հ.-ե. **ei* և **oi*> հայ. է, **i* > հայ. ի և **eu* և **ou*> հայ. ոյ, իսկ **u*>հայ. ու). շեշտի տակ առկա է հերթագայության լիաձայն աստիճանը՝ *ei/oi* և *eu/ou*, իսկ շեշտազուրկ վանկում՝ ստորին (գրո) աստիճանը՝ *i* և *u*¹⁰:

⁷ Տե՛ս **В. Ф. Кривчик, Н. С. Можейко**, *Աշխ.*, էջ 57, ծանոթ. 25:

⁸ Տե՛ս **Գ. Զահուկյան**, Հին հայերենի..., էջ 201-202:

⁹ Տե՛ս **Г. Джаукян**, *Сравнительная грамматика армянского языка*, Ер., 1982, էջ 31:

¹⁰ Տե՛ս **Գ. Զահուկյան**, Հին հայերենի..., էջ 202:

Այդպես էլ նա փորձում է հ. -ե. հերթագայությունների համակարգի մեջ հիմքեր տեսնել հին հայերենի ի/ը կամ զրո և ու/ը կամ զրո հերթագայությունների համար: Հնարավոր է համարում, որ այս դեպքում առկա են հ. -ե. *ե/օ/զրո կամ, թերևս, *ե/օ/թ և *օ/թ հերթագայությունների հետագա դրսևորումները: Ըստ այդմ ենթադրում է, որ հայերեն լիաձայն աստիճանի ձայնավորման ի-ի և ու-ի (< *ե-ից և < *օ-ից) դիմաց գտնվող ը-ն, որ որոշ դիրքերում կարող էր և տղվել, շեշտագուրկ դիրքում ներկայացնում է հ. -ե. զրոն կամ թ -ն: Գ. Ջահուկյանը ընդունելով, որ հ. -ե. թ -ն V դ-ի հայերենում տղվել էր շեշտի տակ ա, անշեշտ դիրքում ը, իր այս տեսակետը տարածում է նաև հ. -ե. վանկարար ձայնորդների վրա: Ըստ նրա՝ նախահայերենի չշեշտվող * ր, լ, ո, ը -ն տղվել են (ը)ր, (ը)ղ, (ը)մ, (ը)ն, շեշտվողները՝ ար, աղ, ամ(ան), ան: Վերջին դեպքում նա հայ. ի(ը), ու/(ը) հնչյունափոխությունների մեջ փորձում է տեսնել հ. -ե. *en/on/ո, *em/om/ո և դրանց երկար աստիճանը ներկայացնող *են/օն/ո(թ) և *եմ/օմ/ո(թ մ) հերթագայությունների դրսևորումները: Իհարկե, նա չի բացատրում նաև , որ անշեշտ վանկերում (ը)ր, (ը)ղ, (ը)մ, (ը)ն-ը կարող էին հ. -ե. *ր, լ, ո, ը-ից առաջանալ նաև երկրորդաբար (շեշտակորույս լիներով)՝ անցնելով ար, աղ, ամ, ան ձևերից¹¹:

Այսպիսով, Գ. Ջահուկյանը հայ. (ը)ր, (ը)ղ, (ը)մ, (ը)ն-ի առաջացման համար նշելով բացատրության երկու հնարավոր տարբերակ՝ կոնկրետ նախապատվություն չի տալիս նրանցից ոչ մեկին:

Բայց կուզեի՞ք նշել, որ հայերենի շեշտափոխական հնչյունափոխությունների դեպքում ընդհանրապես և ի/ը-զրո, ու/ը-զրո, ինչպես և վանկարար ձայնորդների հարցում մասնավորապես, մեզ անհամոզիչ է թվում վերջիններիս կապը հ. -ե. վերոհիշյալ հերթագայությունների հետ: Նախ՝ հ. -ե. նախալեզվում *ե/օ/թ, *օ/թ հերթագայությունները, որպես կանոն, հանդիպում են այն դեպքում, եթե *ե-ն և օ-ն հանդես են գալիս որպես հերթագայվող վանկի հիմնական ձայնավորներ՝ լիաձայն աստիճաններ, և ոչ թե իբրև վերջիններիս երկար աստիճաններ¹²:

Միևնդեռ, ինչպես ցույց են տալիս հին հայերենի ի/ը և ու/ը հերթագայության ենթարկվող հ. -ե. ծագում ունեցող բառերի՝ ցեղակից լեզուներում ավանդված համապատասխան ձևերը, հայերենի համար ենթադրվող երկար *ե և *օ ձայնավորներով հ. -ե. նախաձևերը գրեթե ամբողջությամբ ներկայացնում են լիաձայն *ե և *օ ձայնավորների համապատասխան երկար աստիճանները. ինչպես՝ հայ. փլ (< *vél/vel-) -գլոր, թիռ (< *prēr/prer-) -թռչել, միտ(ք) (< *mēd/mod-) -մտաց, թուր (< *tōr/ter-), մամուլ (< *mōl/mol-) և այլն¹³:

Ինչ վերաբերում հ. -ե. *ե/օ/զրո հերթագայությանը, ապա վերջինս, ընդհանրապես, տեղի էր ունենում այն դեպքում, եթե *ե -ն և *օ -ն ներկայացնում էին հիմնական *ե և *օ ձայնավորների երկար աստիճանները¹⁴ (հմմտ. հուն. πατηρ < հ. -ե. *pə tēr, հուն. եզ. հայց. πατερα < հ. -ե. *p ə terq, , հուն. եզ. սեռ. πατρος < հ. -ե. *pə trós և այլն): Վերջին դեպքում թվում է, թե հին հայերենի ի/զրո և ու/զրո հնչյունափոխության հիմքում կարող էր ընկած լինել հ. -ե. *ե/զրո և *օ/զրո հերթագայությունը, այդպես էլ, մանավանդ եթե նկատի ունենանք հնչյունափոխության ուղղությունը, է/ի և ոյ/ու-ի հիմքում հ. -ե. *ei/oi/i և *eu/ou/u հերթագայությունները: Բայց այն հանգամանքը, որ հ. -ե. ձայնորդի համակարգի երկու հիմնական ձայնավորները՝ *ե -ն և *օ-ն, չեն մասնակցում հին հայերենի շեշտափոխության

¹¹ Տե՛ս Գ. Ջահուկյան, Հին հայերենի..., էջ 204-205:

¹² Տե՛ս А. Мейе, Введение в сравнительное изучение индоевропейских языков, М.-Л. 1938, էջ 178, О. Szemerényi, նշվ. աշխ., էջ 81-82

¹³ Հայերենի ցեղակից ձևերը և դրանց համար վերականգնվող հ. -ե. նախաձևերը տե՛ս Հր. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, հ. I-IV, Եր., 1971-1979, համապատասխան գլխաբառերի տակ:

¹⁴ Տե՛ս А. Мейе, նշվ. աշխ., նույն տեղում, О. Szemerényi, նշվ. աշխ., էջ 77:

հետևանքով առաջ եկած հերթագայություններին, մեր կարծիքով, վերջիններին և հ.ե. ձայնդարձի միջև կապ տեսնելու հնարավորությունը դարձնում է քիչ հավանական: Մասնավաճ, որ հ.-ե. *ei/oi/i և *eu/ou/u -ի հիմքում, ըստ էության, ընկած է հ.-ե. նույն *e/o/զրո հերթագայությունը, և այդ դեպքում երկբարբառների երկրորդ բաղադրիչները՝ *i-ն և *u-ն, հերթագայության զրո աստիճանում վերածվում են վանկարար ձայնավորների: Ընդհակառակն, հայերենի շեշտափոխական հնչյունափոխությունները հ.-ե. ձայնդարձի համակարգի հետ կարելի է համեմատել այլ առումով: Լեզվաբանների մի մասը հ.-ե. հերթագայությունների համակարգը փորձում է կապել շեշտի կրած փոփոխությունների հետ¹⁵ (հմմտ. սանսկ. *é-mi* «զնում եմ», *i-más* «զնում ենք», հուն. *ἔι-μι* «զնում եմ», *ἰ-μέν* «զնում ենք» և այլն): Հայերենն այս դեպքում հաստատում է նման կապի հնարավորությունը, մի հանգամանք, որ մատնանշում է նաև Գ. Ջահուկյանը¹⁶:

Գալով նախահայերենի շեշտակիր և շեշտագուրկ վանկարար ձայնորդների ենթադրյալ տարբեր արտացոլմանը հին հայերենում, ապա պիտի նշենք, որ այդ նույնպես մեզ անհամոզիչ է թվում: Իրականում, ինչպես իրավացիորեն մատնանշում է Կ. Բրուգմանը, հ.-ե. վանկարար ձայնորդների դրսևորումը ցեղակից լեզուներում անկախ է եղել բառաշեշտի դիրքից (հմմտ. սանսկ. *gátis*, հուն. *βάσις*, գոթ. *ga-qumþs* <հ.-ե. *g* *m̄tis* «զնալը» < *g*em «զնալ» արմատից և սանսկ. *matás*, հուն. (αυτο)-ματο, գոթ. *munda* և այլն < հ.-ե. *m̄tós «մտածված» < *men «մտածել, խորհել» արմատից)¹⁷:

Արդ, կարծում ենք՝ ճիշտ չէր լինի այս դեպքում հայերենի համար վերապահությունն անել: Բացի այդ, շեշտի տակ հ.-ե. *ē, ō, ē, ōm > հայ. ին, ուն, իմ, ում իսկ շեշտագուրկ վանկում հ.-ե. *n (ə n) և *m (ə m) > հայ (ը) ն, (ը) մ հնչյունափոխությունը բացատրելիս Գ. Ջահուկյանը նկատի է առնում նախահայերենի շեշտի ազդեցությունը: Այս դեպքում էլ, սակայն, նա հնարավոր է համարում նաև հ.-ե. *n (ə n) և *m (ə m) > հայ (ը) ն, (ը) մ անցումը ան, ամ միջակա օղակի վրայով իբրև բացատրության երկրորդ տարբերակ¹⁸:

Ինչպես փաստերը ցույց են տալիս, հ.-ե. ազատ շեշտը նախահայերենում երկակի փոփոխություն է կրել. նախ այն ամրացել է բառի վերջընթեր վանկի վրա, որը առաջ է բերել շեշտահաջորդ վանկի վերջավորության թուլացում կամ անկում, ապա այն դարձել է շարժուն - վերջնավանկային՝ այս դեպքում ծնունդ տալով հայերենի շեշտափոխական հնչյունափոխություններին: Ընդ որում, համոզիչ է Գ. Ջահուկյանի այն տեսակետը, որ շարժական շեշտը հայերենը հավանաբար ժառանգել է նախալեզվից, և որ փոփոխությունն (իմա՝ շեշտափոխական հնչյունափոխությունը - Ս. Ա.) սկսվել է հ.-ե. այնպիսի հիմքերից, որոնց հերթագայվող ձայնավորներն ու երկբարբառները եզ. ուղիղ հոլովներում շեշտի տակ էին, իսկ թեք հոլովներում շեշտն անցնում էր հաջորդ վանկերին. հ.-ե. այս տիպի շեշտի՝ հայերենում տիրապետող դառնալու և շեշտահաջորդ վանկի: Սույն ձայնավորների անկման հետ կապված՝ այս տարբերությունն ընդհանրաճանաչում է՝ համաբանության մտարածվելով բոլոր բառերի վրա¹⁹:

Այդուհանդերձ, կարծում ենք՝ ճիշտ չէր լինի հայերենի շեշտափոխական հնչյունափոխությունների համար հիմքեր փնտրել հ.-ե. ձայնդարձի մեջ և ըստ այլմ, ասենք, հայ. վերոհիշյալ ն, ուն, իմ, ում-ը դիտել իբրև հ.-ե. ձայնդարձի *ē, ō, ē, ōm լիաձայն աստիճանների դրսևորումներ, իսկ (ը) ն, (ը) մ-ը՝ իբրև *n (ə n), *m (ə m) զրո կամ ստորին աստիճանների դրսևորումներ: Դրա հետ կապված՝ մենք

¹⁵ Տե՛ս Օ. Szemerényi, նշվ. աշխ., էջ 104-105:

¹⁶ Տե՛ս Գ. Ջահուկյան, Հին հայերենի..., էջ 202:

¹⁷ Տե՛ս Կ. Brugmann, նշվ. աշխ., էջ 394, Anm. 2, էջ 395, Anm. 3, էջ 48-49, [32:

¹⁸ Տե՛ս Գ. Ջահուկյան, նշվ. աշխ., էջ 205:

¹⁹ Տե՛ս Գ. Ջահուկյան, նշվ. աշխ., էջ 203:

գտնում ենք, որ հայ. (ը)ն, (ը)ն-ը կարող էին առաջանալ միմիայն երկրորդաբար՝ անցնելով *ան, *ամ միջակա օղակի վրայով, որովհետև, ինչպես ստորև կփորձենք ցույց տալ, հ.-ե. *լ, լ, ո, ո վանկարար ձայնորդների՝ համապատասխան ար, ալ, ան, և կերպով դրսևորումը նախահայերենում, մեր կարծիքով, ոչ միայն նախորդել է շեշտափոխական հնչյունափոխությունների հաստատմանը, ինչպես նաև վերջնավանկերի թուլացմանն ու անկմանը, այլև այս դեպքում նույնպես այն անկախ է եղել բառաշեշտի դիրքից: Կարծում ենք՝ այդ է վկայում մասնավորապես ոչ միայն գրաբարյան արարւթ < *arətrom և հարբ < հավարբ < հավարբի < *pərbhi (հմմտ. սանսկ. հոգ. գործ. pitrbhis)²⁰ ձևերի հակադրությունը (հակառակ դեպքում նույն օրինաչափությամբ պետք է ունենայինք հայ. *արար < *arətr՝ վերջնավանկային *om -ի անկումից հետո), այլ նաև հին հայերենի գեղմն < *welmo - գեղման, և ատամն < *dōmo - ատաման հերթագայությունը: Այս դեպքում հայերեն գեղմն և ատամն բառերը պատկանում են հ.-ե. հոլովման այն տիպին, որն առկա է սանսկ. nama «անուն», եգ. սեռ. namnas, հուն. ὄνομα «անուն», եգ. սեռ. ονοματος ձևերում՝ երկուսն էլ < հ.-ե. *nomo «անուն», եգ. սեռ. nomos՝ հունարենում երկրորդական τ-ի հավելումով: Արդ, հայերենի գեղման, ատաման և այլն եգ. սեռ.-տր.-ի ա-ն, որ համարվում է գործիականի *-n-bhi(s) > հայ. ամբ-ամբք ձևերից համարանությամբ ներմուծված²¹, մեր կարծիքով, սեռ.-տր. հոլովների վրա տարածվել է նախահայերենում վերջնավանկերի անկումից առաջ, այսինքն՝ ոչ թե հ.ե. *welmoն և *dōmoն սեռ. ձևերը նախահայերենում դարձել են *welmno > *wélmo-, *dōmo- > *dōmo- և հետո միայն գործիականի ազդեցությամբ՝ *welmo > գեղման, *danmo > ատաման (այս դեպքում նախնական *-os վերջավորության անկումից հետո շեշտահաջորդ *mo-ի a-ն նույնպես պիտի նախորդ վանկի շեշտի ազդեցությամբ թուլացման ենթարկվեր), այլ ա-ն սեռ.-տրականում ներմուծվել է անշուշտ դեռևս հ.-ե. համապատասխան *-os-ի առկայության ժամանակ՝ *welmo > *welmo > *welmo > *welmo > գեղման, *dōmo > *danmo > *danmo > ատաման և այլն: Այսպիսով, նախահայերենի վերջընթեր վանկի ա-ն *-os-ի անկումից հետո ինքը դարձել է վերջնավանկային և դրա շնորհիվ պահպանվել: Արդ, եթե այդ այդպես է, ապա ուրեմն հ.-ե. *ո > հայ. ան անցումը տեղի է ունեցել մինչև հ.ե. ազատ շեշտի՝ նախահայերենում վերջընթեր վանկի վրա ամրանալը և դրանով իսկ՝ հ.-ե. սեռ.-տրականի վերջավորության անկումից առաջ: Բայց կարելի՞ էր մտածել, որ հ.-ե. *ո > հայ. (ը)ն, *լ > (ը)ր և այլն նախահայերենում տեղի են ունեցել դեռևս հ.-ե. շեշտի պայմաններում, և հայերենը հերթագայության այդ տիպը ժառանգել է հ.-ե. այն արեմատիկ հիմքերի միջոցով, որոնց թեք հոլովների դեպքում բառահիմքը հանդես էր գալիս զրո աստիճանի ձայնավորումով (հմմտ. սանսկ. dán «ատամ» < հ.-ե. *dōnt, եգ. սեռ. սանսկ. datás < հ.-ե. *dōntós և այլն), իսկ հետագայում հերթագայության այդ տիպը համաբանությամբ տարածվել է նաև մյուս դեպքերի վրա: Ի՞նչ են վկայում լեզվական փաստերը այդ մասին: Կարծում ենք՝ հենց միայն հայ. մարդ բառի ստուգաբանական քննությունը բացառում է վերոհիշյալ ենթադրության հնարավորությունը: Վերջինս ծագում է հ.-ե. *mortó- ձևից (հմմտ. սանսկ. मृता- «մեռյալ», ավեստ. mərəta «մեռյալ», լատ. mortuus «մեռյալ» և այլն): Իսկ քանի որ, ինչպես վերը տեսանք, հ.-ե. *լ, լ, ո, ո վանկարար ձայնորդները նախահայերենում համապատասխան *ar, al, an, am ձևով դրսևորվել են նախքան հ.ե. շեշտի՝ բառի վերջընթեր վանկի վրա ամրանալը, ապա, հ.-ե. շեշտակիր և անշեշտ վանկարար ձայնորդների համար նախահայերենում տարբեր դրսևորումներ ենթադրելու դեպքում ապաստելի էր, որ շեշտագուրկ դիրքում հ.-ե. *mortó-ի *լ-ն դրսևորվեր իբրև հայ. (ը)ր և ոչ թե իբրև ար, ինչպես լինում է սովորաբար: Բայց

²⁰ Տե՛ս Գ. Զահուկյան, Գշվ. աշխ., էջ 69:

²¹ Տե՛ս Գ. Զահուկյան, Գշվ. աշխ., էջ 179:

եթե նույնիսկ վերջնավանկերի անկույմից հետո էլ արժեմատիկ հիմքերի համաքա-
նությունը ուղղական հողովում վերականգնվեր լիաձայն աստիճանը, ապա զոնե
թեք հողովներում պետք է պահպանվեր համապատասխան զրո աստիճանի ներ-
կայացուցիչը՝ հայ. *մրոյ (թեև համաքանությանը լիաձայն աստիճանի վերա-
կանգնման դեպքում էլ վերջինս պետք է լիներ *միրոյ կամ *մուրոյ): Արո, մեր կար-
ծիքով, ճիշտ չէր լինի հայերենի շեշտափոխական հնչյունափոխությունները ծա-
գումնաքանորեն կապել հ.-ե. ձայնդարձի համակարգի հետ և դրա հետ կապված՝
ընդունել հ.-ե. *ո > հայ. (ը)ն ուղղակի անցում ինչպես շեշտափոխական հնչյունա-
փոխությունների, այնպես էլ վերջնավանկերի թուլացման արդյունքում առաջա-
ցած հայ. գեղմն, առամն և այլ մասնատիպ բառերի համար, այլ միայն միջնորդա-
վորված՝ հ.-ե. *ո > հայ. *ան>(ը)ն հաջորդական հնչյունափոխություն: Ուստի,
մենք կարծում ենք՝ ավելի ճիշտ կլիներ հայերենի շեշտափոխական հնչյունափո-
խությունների ծագման հարցը քննել այլ լեզուներում հանդիպող՝ հարակից շեշ-
տի ազդեցությամբ շեշտահաջորդ կամ շեշտանախորդ վանկերի ձայնավորների
թուլացման ու անկման համանման երևույթների հետ: Մենք արդեն խոսել ենք հին
սլավոններենի շեշտագուրկ և շեշտի տակ գտնվող *i* և *ü* գերկարճ հնչյունների հե-
տագա ճակատագրի մասին սլավոնական լեզուներում.

հ. սլ. *dinŭ - dŭnĭjā* > ռուս. *день - дня*

հ. սլ. *sŭnŭ - sŭna* > ռուս. *сон - сна* և այլն:

Բառասկզբի շեշտի ազդեցությամբ է բացատրվում լատիներենի պատմա-
կան զարգացման ընթացքում տեղի ունեցած շեշտահաջորդ վանկի ձայնավորի
ոչ միայն թուլացումը՝ *colligo* «ժողովում եմ, հավաքում եմ» <**college, lego* «հավա-
քում եմ», *adigo* «քշում-բերում եմ» <**adago, ago* «քշում եմ» և այլն²², այլև թուլաց-
ման արդյունքում առաջացած կամ սկզբնական վերին բարձրացման *i* ձայնավորի
անկումը. *pergo* «առաջ եմ շարժվում» <**per-rego* հմմտ. *per-texi* «առաջ շարժ-
վեցի», *dexter* «աջ, հաջորդակ» <**dexi-tero, doctus* «գիտուն, կրթված» <**docitus* և
այլն²³: Հայերենի շեշտափոխական հնչյունափոխություններն էլ, անշուշտ, առա-
ջացել են տվյալ լեզվի պատմական զարգացման ընթացքում համանման ճանա-
պարհով: Ընդ որում, հայերենում *ի/ը* և *ի/զրո* հերթագայությունները մի կողմից,
ու/ը և *ու/զրո* հերթագայություններն էլ մյուս կողմից՝ որոշակի բաշխման հարա-
բերության մեջ են գտնվում միմյանց նկատմամբ. միևնույն ձայնավորների թու-
լացման արդյունքում, կախված հնչյունական շրջապատի բնույթից, մի դեպքում
առաջանում է թույլ ը ձայնավոր, մի այլ դեպքում տվյալ վանկի ձայնավորը լի-
վին դուրս է ընկնում (զրո)՝ հմմտ. հանգիստ-հանգըստի (*ի/ը*), բայց ամուսին-ա-
մուսնու (*ի/զրո*) և այլն: Այդ առումով, հայերենը բացառություն չի կազմում: Այս-
պես, ֆրանսերենում լատիներենի տարբեր ձայնավորների թուլացման արդյուն-
քում (դարձյալ շեշտի ազդեցությամբ), կախված հնչյունական շրջապատի բնույ-
թից, մի դեպքում առաջացել է թույլ ձայնավոր, մյուս դեպքում տվյալ վանկի ձայ-
նավորը դուրս է ընկել՝ հմմտ. լատ. *Venire* > ֆրանս. *venir* (*və nir*) «գալ», բայց լատ.
camera > **chamre* > ֆրանս. *chambre* > «սենյակ» կամ լատ. *interāre habeo* >
ֆրանս. *entrer ai* > (*je*) *entrerais* (*atrəre*) > «ներս եմ մտնելու», բայց լատ. *cantare*
habeo > *chanter ai* > (*je*) *chanterai* (*ʃatrə*) «երգելու եմ», այսինքն՝ մի կողմից լատ.
e > ֆրանս. *ə* և լատ. *a* > ֆրանս. *e* > *ə*, մյուս կողմից՝ լատ. *e* > ֆրանս. *զրո* և
լատ. *a* > ֆրանս. *e* > *զրո*: Ուստի, կարծում ենք՝ ավելի ճիշտ կլինի հայերենի
շեշտափոխական հնչյունափոխությունները նույնպես բնորոշել իբրև հ.-ե. լե-
զուներում ձայնավորների հերթագայության մոտ շեշտին պատկանող երևույթ-
ներ: Հետևաբար, ամփոփելով կարող ենք ասել, որ իրենց բնույթով իբրև ոչ

²² Տե՛ս K. Brugmann, *Աշվ. աշխ.*, էջ 223, И. М. Тронский, *Աշվ. աշխ.*, էջ 82-83:

²³ Տե՛ս K. Brugmann, *Աշվ. աշխ.*, էջ 214-215, И. М. Тронский, *Աշվ. աշխ.*, էջ 90-91:

հնդեվրոպական պետք է դիտել և հնդեվրոպականներից սահմանազատել ցեղակից լեզուներում հանդիպող ձայնավորների հերթազայության այն բոլոր դեպքերը, երբ արմատի կամ ածանցի տվյալ վանկի միևնույն ձայնավորի հիման վրա, վերջինիս դիմաց, շեշտափոխական հնչյունափոխության, համարանության կամ այլ պատճառով առաջացել է մի այլ ձայնավոր, և դրանով իսկ՝ ձայնավորների հերթազայություն:

С. Р. АВЕТЯН - Опыт рассмотрения древнего и нового пластов чередований гласных в индоевропейских языках. - Статья посвящена одному из труднейших вопросов индоевропейского языкознания - разграничению древнего и нового пластов чередований гласных, наблюдаемых в родственных языках. Речь идет о первоначальном характере индоевропейского праязыкового аблаута и дальнейшей его судьбе в развитии отдельных индоевропейских языков. При исследовании отражений праязыкового аблаута в родственных языках выясняется, что не все чередования гласных унаследованы от языка-основы. В течение самостоятельного развития отдельных индоевропейских языков по разным причинам возникли новые чередования гласных, генетически не связанные с праязыковым аблаутом, но внешне часто трудноотличимые от отражений исконного аблаута. В статье делается попытка на основании примеров из разных индоевропейских языков разграничить древнейшие явления индоевропейского аблаута от инноваций, присущих отдельным родственным языкам. Так внешне одни и те же чередования е/нуль, наблюдаемые в латинских *pater* "отец", *patris* "отца" и *ager* "поле", *agri* "поля", в действительности различны по происхождению: в первом случае данное чередование унаследовано от индоевропейского праязыка (ср. греч. *πατήρ* "отец", *πατρός* "отца"), а во втором случае оно возникло на итальянской почве в результате ряда фонетических изменений *ager* < **agerg* < **agrs* < * и.е. **agros* "поле" (ср. греч. *αγρός* "поле", др.-инд. *ajras* "равнина" и т.д.)."